ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 3-8-ը Չեռնոգորիա (ք. Պոդգորիցա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   Արթուր Նիկոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բուսասանիտարիայի վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Չեռնոգորիա (ք. Պոդգորիցա), 2023 թվականի սեպտեմբերի 3-8-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Բույսերի միջազգային պաշտպանության կոնվենցիայի քարտուղարություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   IPPC Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները (հարցերը)**
   Քննարկվել են բույսերի պաշտպանության միջազգային ստանդարտներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերը:

7. **Հանդիպումները, ելույթները**
   Հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք երկրների բուսասանիտարիայի ոլորտի պատասխանատուների և Բույսերի Պաշտպանության Եվրոպական և Միջերկրածովյան Կազմակերպության գլխավոր տնօրենի հետ:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**
   Հանդիպման ժամանակ ընդունվել է որոշում առ այն, որ բույսերի պաշտպանության միջազգային ստանդարտներում կատարվող փոփոխություններն ընդհանուր առմամբ ընդունելի են բոլոր երկրների համար և պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ որոշակի տեխնիկական ուղղումներից հետո դրանք պետք է ներկայացվեն IPPC քարտուղարությանը: Բացի այդ, նախնական պայմանավորվածություն է

ձեռք բերվել, որ 2024 թվականին IPPC Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանային աշխատաժողովը անցկացվի Հայաստանի Հանրապետությունում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Բույսերի Պաշտպանության Եվրոպական և Միջերկրածովյան Կազմակերպության գլխավոր տնօրենի հետ հանդիպման ժամանակ վերջինիս կողմից առաջարկություն է ներկայացվել, որպեսզի Հայաստանը մեկնարկի Բույսերի Պաշտպանության Եվրոպական և Միջերկրածովյան Կազմակերպությանն անդամակցության գործընթաց:

Գործուղվող՝ Արթուր Նիկոյան

13 սեպտեմբերի, 2023թ.